ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/74

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Բողոքաբեր՝ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-10/17» ծածկագրով գնանշման հարցում, փորձաքննության ծառայությունների (ՀՀ ՊՆ զորամասերի արտադրական վտանգավոր օբյեկտների փորձաքննություն, պատասխանատու անձանց ուսուցում և որակավորում) ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Բողոքաբեր) կողմից 16.06.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Բողոքաբերը ներկայացրած բողոքով խնդրել է՝ չեղյալ հայտարարել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-10/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը, իսկ նոր ընթացակարգի անցկացումը իրականացնել վերոնշյալ փոփոխությունների իրականացմամբ:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 16.06.2020թ.-ին:

17.06.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/74 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

24.06.2020թ.-ին և 03.07.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 24.06.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 03.07.2020թ.-ին:

2. «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ն 16.06.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-10/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմանագրի նախագծի (հավելված N 6) տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով պահանջվող ծառայությունները սահմանված են որպես 1 (մեկ) չափաբաժին, այն դեպքում, երբ որ դրանք ունեն տարբեր ծածկագրեր, մասնավորապես արտադրական վտանգավոր օբյեկտների փորձաքննության իրականացման ծածկագիրը սահմանված է 50531140, իսկ անվտանգության ոլորտում ուսուցման ծառայությունների ծածկագիրը՝ 80551100, հետևաբար խախտվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները, ինչպես նաև տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ծառայությունների 2-րդ կետով սահմանված <<Օդ, He, O2, CO միջավայրում և բարձր ճնշման՝ 100-400 կգուժ/սմ2 տակ աշխատող գազագլանաանոթների (բալոնների) նորոգման և բարձր ճնշման փականների փոխարինման աշխատանքների իրականացման պահանջը սահմանված չէ տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացման օրենսդրությամբ, հետևաբար

վերոնշյալ պահանջով սահմանափակվում է տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնող հնարավոր մասնակիցների մասնակցությունը «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-10/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է չեղյալ հայտարարել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-10/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը, իսկ նոր ընթացակարգի անցկացումը իրականացնել վերոնշյալ փոփոխությունների իրականացմամբ:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 17.06.2020թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/9009-2020 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ հնարավորություն տալով «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 16.06.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 24.06.2020թ.-ի թիվ Մ-24213-2020 գրությամբ ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով Ձեր 17.06.20թ. թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/9009-2020 գրությամբ ներկայացված ՀՀ ԱԻՆ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի բողոքը՝ կապված Պաշտպանության նախարարության կարիքների համար «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-10/17» ծածկագրով կազմակերպված 2020թ. փորձաքննության ծառայությունների (ՊՆ զորամասերի արտադրական վտանգավոր օբյեկտների փորձաքննություն, պատասխանատու անձանց ուսուցում և որակավորում)» գնման ընթացակարգի հետ, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված բացառությամբ, գնման առարկա հանդիսացող «Փորձաքննության ծառայությունների» ձեռքբերման մեջ ներառված է.

1. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջներով սահմանված՝ Արտադրական վտանգավոր օբյեկտների փորձաքննությունը,

2. ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տեխնիկական անվտանգության ապահովման համակարգի օղակ հանդիսացող արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող և պատասխանատու անձանց ուսուցումը և որակավորումը:

Ծառայությունների ձեռքբերումն անհրաժեշտ է դիտարկել որպես մեկ ամբողջական չափաբաժին, քանի որ համաձայն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի և 18-րդ հոդվածի պահանջների՝ ՊՆ զորամասերում ու ստորաբաժանումներում շահագործվող արտադրական վտանգավոր օբյեկտների փորձաքննությունը, ուսումնամեթոդական ծրագրերի մշակումը, ոլորտի մասնագետների, փորձագետների, տնտեսության մեջ աշխատող ինժեներատեխնիկական և մասնագետ կադրերի ուսուցման և որակավորման գծով աշխատանքների կազմակերպումը պետք է իրականացնեն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հավատարմագրված և լիազոր մարմնի կողմից հաշվառված իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից գնվող ծառայությունները ներառված են տվյալ տարվա բյուջեի գնման պլանով հաստատված գումարի համապատասխան իրականացման ծածկագրի (CPV կոդ) շրջանակներում:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ նաև 2018 և 2019 թվականների գնման պլանով հաստատված գումարի շրջանակներում պլանավորել և համապատասխանաբար՝ 26.12.18թ. ՄԱԾՁԲ-10/21-1 (CPV կոդ՝ 50531140/1) և 18.10.2019թ. ԳՀԾՁԲ-10/21-1 (CPV կոդ՝ 50531140/1) պայմանագրերով, ամբողջ ծավալով, սահմանված ժամկետում և պատշաճ որակով իրականացվել են ՀՀ ՊՆ զորամասերի արտադրական վտանգավոր օբյեկտների փորձաքննության (վերելակների, կաթսաների փորձաքննություն, պատասխանատու անձանց ուսուցում և որակավորում) ծառայություններ՝ ՀՀ ԱԻՆ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, որոնց գնման գործընթացում ծածկագրի (CPV կոդ) առարկություններ կամ դիտողություններ չեն եղել:

Ապահովելով զինատեխնիկայի մարտունակությունը պահպանելու անհրաժեշ-տությունը և հաշվի առնելով նրանց շահագործման առանձնահատկությունները, առկա Օդ, He, O2, CO միջավայրում և բարձր ճնշման՝ 100-400 կգուժ/սմ2 տակ աշխատող գազագլանաանոթների (բալոնների) փորձաքննությունն անհրաժեշտ է իրականացնել՝ համատեղելով նրանց նորոգման աշխատանքները, որը ՀՀ զինված ուժերի պահանջով սահմանում է պատվիրատուն՝ ՀՀ ՊՆ պատասխանատու ստորաբաժանումը:

Բողոքում ներկայացրած առարկությունները հակասում են գործող օրենսդրության պահանջներին, մասնավորապես ՀՀ «Գնումների մասին» և ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» օրենքներին և կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերին:

Միաժամանակ հայտնում եմ, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-10/17» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի համաձայն՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանվել է 19.06.20թ. ժամը 11.00-ին, սակայն այդ ժամկետում հայտեր չեն ներկայացվել:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2020/74 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

I. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից փորձաքննության ծառայությունների (ՊՆ զորամասերի արտադրական վտանգավոր օբյեկտների փորձաքննություն, պատասխանատու անձանց ուսուցում և որակավորում) ձեռքբերման նպատակով 11.06.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-10/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

II. Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի և թիվ 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում փորձաքննության ծառայությունների ձեռքբերումը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 50531140/1:

III. www.armeps.am/PPCM/ կայքում առկա ՀՀ պաշտպանության նախարարության 2020 թվականի գնումների պլանի համաձայն՝ որպես ԳՄԱ դասակարգման միջանցիկ (CPV) կոդ փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար նշվել է 50531140/1, քանակը 1, իսկ գինը՝ 40 000 000 ՀՀ դրամ:

IV. www.gnumner.am կայքում առկա գնումների միասնական անվանացանկում (CPV կոդեր) առկա տվյալների համաձայն՝ որպես ԳՄԱ դասակարգման միջանցիկ (CPV) կոդ փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար նշված է 50531140, իսկ անվտանգության ոլորտում ուսուցման ծառայությունների համար որպես ԳՄԱ դասակարգման միջանցիկ (CPV) կոդ նշված է 80551100:

V. Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝

1. Կռունկների և ամբարձիչ սարքավորումների փորձաքննություն՝ անվտանգության հանգույցների ուսումնասիրություն և զննություն, մետաղական ճոպանների անհամասեռությունների ուլտրաձայնային ախտորոշում:

2. Օդ, He, O2, CO միջավայրում և բարձր ճնշման՝ 100-400 կգուժ/սմ2 տակ աշխատող գազագլանաանոթների (բալոնների) փորձաքննություն, փորձարկում և նորոգում՝ անհամասեռությունների հայտնաբերում, հաստաչափում, ներքին պատերի վնասվածքների (փոսիկների) ուլտրաձայնային ախտորոշում, բարձր ճնշման փականների փոխարինում և ներկում:

3. 60-3500կՎտ հզորությամբ կաթսայատների փորձաքննություն՝ անվտանգության հանգույցների զննում, փորձարկում, գազերի և ծխագազերի արտահոսքի որոշում:

4. Վերելակների փորձաքննություն՝ անվտանգության հանգույցների զննություն, փորձարկում, մետաղական ճոպանների անհամասեռությունների ուլտրաձայնային ախտորոշում:

5. Արտադրական վտանգավոր օբյեկտների (կաթսայատների, ավտոկլավների, կռունկների և ամբարձիչ սարքավորումների) շահագործող անձնակազմի ուսուցում, որակավորում և աշխատանքի թույլտվության վկայականների տրամադրում:

VI. Պատվիրատուի կողմից փորձաքննության ծառայությունների ձեռքբերման նպատակով 11.06.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-10/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտեր չեն ներկայացվել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 16.06.2020թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով Բողոքաբերների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախոսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված գնման ընթացակարգի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ չեն նկարագրում ձեռքբերվող ծառայության հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Պատվիրատուն նման բնութագրեր սահմանելով չի ապահովել մրցակցության հավասար պայմաններ՝ հնարավոր մասնակիցների համար, որի արդյունքում գնումների գործընթացում առաջացվել են մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ: Բացի այդ նման բնութագրերը օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք չեն այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը: Վերոնշյալը ապացուցվում է նաև այն

հանգամանքով, Պատվիրատուի կողմից փորձաքննության ծառայությունների ձեռքբերման նպատակով 11.06.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-10/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտեր չեն ներկայացվել:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից փորձաքննության ծառայությունների (ՊՆ զորամասերի արտադրական վտանգավոր օբյեկտների փորձաքննություն, պատասխանատու անձանց ուսուցում և որակավորում) ձեռքբերման նպատակով 11.06.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-10/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի և թիվ 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում փորձաքննության ծառայությունների ձեռքբերումը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 50531140/1:

www.armeps.am/PPCM/ կայքում առկա ՀՀ պաշտպանության նախարարության 2020 թվականի գնումների պլանի համաձայն՝ որպես ԳՄԱ դասակարգման միջանցիկ (CPV) կոդ փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար նշվել է 50531140/1, քանակը 1, իսկ գինը՝ 40 000 000 ՀՀ դրամ:

www.gnumner.am կայքում առկա գնումների միասնական անվանացանկում (CPV կոդեր) առկա տվյալների համաձայն՝ որպես ԳՄԱ դասակարգման միջանցիկ (CPV) կոդ փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար նշված է 50531140, իսկ անվտանգության ոլորտում ուսուցման ծառայությունների համար որպես ԳՄԱ դասակարգման միջանցիկ (CPV) կոդ նշված է 80551100:

Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝

1. Կռունկների և ամբարձիչ սարքավորումների փորձաքննություն՝ անվտանգության հանգույցների ուսումնասիրություն և զննություն, մետաղական ճոպանների անհամասեռությունների ուլտրաձայնային ախտորոշում:

2. Օդ, He, O2, CO միջավայրում և բարձր ճնշման՝ 100-400 կգուժ/սմ2 տակ աշխատող գազագլանաանոթների (բալոնների) փորձաքննություն, փորձարկում և նորոգում՝ անհամասեռությունների հայտնաբերում, հաստաչափում, ներքին պատերի

վնասվածքների (փոսիկների) ուլտրաձայնային ախտորոշում, բարձր ճնշման փականների փոխարինում և ներկում:

3. 60-3500կՎտ հզորությամբ կաթսայատների փորձաքննություն՝ անվտանգության հանգույցների զննում, փորձարկում, գազերի և ծխագազերի արտահոսքի որոշում:

4. Վերելակների փորձաքննություն՝ անվտանգության հանգույցների զննություն, փորձարկում, մետաղական ճոպանների անհամասեռությունների ուլտրաձայնային ախտորոշում:

5. Արտադրական վտանգավոր օբյեկտների (կաթսայատների, ավտոկլավների, կռունկների և ամբարձիչ սարքավորումների) շահագործող անձնակազմի ուսուցում, որակավորում և աշխատանքի թույլտվության վկայականների տրամադրում:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձը փաստում է, որ բողոքի քննության վեճի առարկա հանդիսացող ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիրը, այն է՝ մասնակիցը փորձաքննության ծառայություններ իրականացնելիս պետք է ապահովի բարձր ճնշման փականների փոխարինում և ներկում, ինչպես նաև պետք է իրականացնի անձնակազմի ուսուցում, որակավորում և աշխատանքի թույլտվության վկայականների տրամադրում պահանջը՝ հակասում է Օրենքի 13-րդ հոդվածով և 25-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջներին, քանի որ Պատվիրատուն իրավունքի չունի առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները՝ տվյալ պարագայում աշխատանքների կատարումը (բարձր ճնշման փականների փոխարինում և ներկում) և ծառայությունների մատուցումը (անձնակազմի ուսուցում, որակավորում և աշխատանքի թույլտվության վկայականների տրամադրում) խմբավորել մեկ չափաբաժնում:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Պատվիրատուն բողոքի քննության ընթացքում Բողոքներ քննող անձին չներկայացրեց առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում խմբավորելու անհրաժեշտության մասին պատշաճ հիմնավորում, ինչպես նաև չներկայացրեց վերջինիս կողմից Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտած չլինելու մասին վերաբերելի ապացույց առ այն, որ սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները չեն խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը: Ընդ որում, այդպիսի հնարավորություն Պատվիրատուն ունեցել է բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները հիմնավոր են, իսկ Ընթացակարգի պահանջներն անհիմն են և սահմանափակում են հնարավոր մասնակիցների հավասար իրավունքները, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 13-րդ հոդվածի և 25-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-10/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը պետք է հայտարարել չկայացած:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 16.06.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/74 ծածկագրով բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-10/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**